



ԼՈՒՐԵՐ

ԿՅԱՆԲ

ԼՈՒՐԵՐ ԸՆՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՑ

Լիոնի Բ ժողովի 700-ամյակի տոնակատարությունը

Սույն թվականի հոկտեմբերի 18—20-ը Լիոնի արքեպիսկոպոս կարդինալ Ալեքսանդր Ռընարի նախաձեռնությամբ Լիոն քաղաքի Սեն Ժան կաթողիկե Մայր եկեղեցում մեծ հանդիսությանը նշվել է Լիոնի Բ ժողովի գումարման 700-րդ տարեդարձը: Տարեդարձի տոնակատարություններին մասնակցելու համար նախապես մասնավոր հրավեր էր ուղղվել և Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին, որ պաշտոնական ներկայացուցիչը ուղարկելու հանդիսություններին: Հայաստանյայց առաքելական եկեղեցին, հանուն Ամենայն Հայոց կաթողիկոսի, ներկայացրել է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը: Հանդիսություններին իրենց մասնակցությունն են բերել նաև օրթոդոքս, ավետարանական, անգլիկան և արևելյան զանազան եկեղեցիների ներկայացուցիչներ:

Հոկտեմբերի 18-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, տեղի կաթողիկե Մայր եկեղեցում, ուր 7 դար առաջ գումարված է եղել Լիոնի Բ ժողովը, տեղի է ունեցել տոնակատարությունների բացման հանդիսավոր արարողությունը՝ նախագահությամբ Քրիստոնյաների միության քարտուղարության նախագահ կարդինալ Ժան Վիլլբրանդի, որը Հոռմից հատկապես եկել է

իրեն մասնավոր ներկայացուցիչը Պողոս Զ Սրբազան Պապի:

Անդրադատնալով Լիոնի Բ ժողովին հարկավոր է նշել, որ այն եղել է պատմական նշանակություն ունեցող մի ժողով՝ գումարված 1274 թվականին Գրիգոր Ժ Պապի կողմից, որի նպատակն է եղել՝ համախըմբել եկեղեցական և աշխարհիկ գլխավոր հաստատությունների ներկայացուցիչներին՝ միասնաբար քննարկելու համար տվյալ ժամանակաշրջանի մի շարք կարևորագույն հարցեր: Հիշյալ ժողովի նախապատրաստությանը, ինչպես և քննարկումներին իրենց մասնակցությունն են բերել 220 եպիսկոպոս և արևմտյան քրիստոնեական եկեղեցու հայտնի աստվածաբաններ, որոնց մեջ հիշատակության արժանի են՝ Մեծն Ալբերտը, ս. Թովմաս Ազվինացին, որը վախճանվում է դեռևս Լիոն չհասած, ինչպես նաև ս. Բոնավանտյուրը, որը նույնպես վախճանվում է ժողովի չորրորդ նիստից հետո: Հարկավոր է նշել նաև, որ 1273 թվականին Գրիգոր Ժ Պապը, հիշյալ ժողովի կապակցությամբ, Հակոբ Ա Կլայեցի Հայոց Հայրապետին ուղարկել է մի թուղթ, որի մանրամասնությունների մասին դժբախտաբար որոշակի տեղեկություններ պակասում են մեզ:

Ժողովում դրված օրակարգի գլխավոր հարցերն են եղել՝ ա) Սուրբ Երկրի ազատագրումն ու պաշտպանությունը մի նոր խաչակրության կազմակերպումով. բ) Արե-

վերջան և արևմտյան եկեղեցիների միջև միության և խաղաղության վերահաստատում. գ) Արևմտյան եկեղեցու ներքին բարեկարգության խնդիրներ:
Ոգեկոչումի արարողության սկզբին Լիոնի Մայր եկեղեցու ալագերեցի կողմից ընթերցվել է Պողոս Զ Պապի՝ այս առթիվ ուղարկած ողջույնի նամակը, որի մեջ Հռոմի Սրբազան Բախանաչապետը, եզրափակելով իր խոսքը, նշում է.

թյունը՝ հիմքը միության, ըստ Առաքյալի խոսքի՝ «Միայն մեկ Տեր, միայն մեկ հավատ», աղաչելով Նրան, որ միացնի Իր սուրբ և ընդհանրական եկեղեցին՝ վերակազմելով այն, և վերակազմի՝ միացնելով այն»:

Այնուհետև, տ. Սերովբե արքեպիսկոպոսը, կարդալուց հետո Պողոս առաքյալի Եփեսոսցվոց թղթի Բ գլխի 14—24 համարները, տաճարում հավաքված հավատաց-



Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանն արտասանում է իր ողջույնի խոսքը

«Գոհությամբ ենք մատուցում Աստծուն, որ այսօր, յոթ հարյուր տարի հետո, վերացել են այն բազում խոչընդոտները, որոնք այն ժամանակ արգելք էին հանդիսացել Գրիգոր Ժ Պապին և ժողովական մյուս հայրերին՝ իրականացնելու եկեղեցու վերանորոգման և հաշտության գործը, որ նրանք ցանկանում էին առաջ տանել: Մեր ժամանակաշրջանում, եկեղեցու ներկա պայմաններում, մենք կարող ենք վճռականորեն շարունակել այդ գործը: Եվ, սեփականացնելով Գրիգոր Ժ Պապի գրեթե մարգարեական խոսքերը, ջերմետանդությանը և ի խորոց սրտի հացում ենք բարյաց Բաշխիչին, որի միությունը հիմնում է հավատի միու-

յալների խոուն բազմության առաջ, հանուն Հայաստանյայց եկեղեցու և նրա Գահակալի, հանդես է եկել ողջույնի հետևյալ խոսքով.

«Սրբազան եղբայրներ ի Բրիստոս և սիրելի հավատացյալներ,

Մեծ հաճությամբ է, որ հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցվո և անոր Պետին՝ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին, կմասնակցինք Լիոնի Բ ժողովի 700-րդ տարեդարձի հանդիսությանը: Այս առթիվ հաճելի պարտականությունը ունինք նաև ձեզի հաղորդելու Նորին Սրբության լավագույն մատթանքները և աղոթքները քրիստոնեա-

կան եկեղեցիներու փոխադարձ հասկացողության և գործակցության համար:

Հավաքված այսօր այս սուրբ վայրին մեջ, քրիստոնեական եկեղեցիներու ներկայացուցիչներս միասին կոգեկոչենք 1274 թվականի Լիոնի Բ ժողովը, որուն նպատակն էր՝ հաշտեցնել Արևելքի և Արևմուտքի եկեղեցիները, նպատակ մը, որ, ավա՞ղ, ձախողության մատնվեցավ:

Երբ կուսումնասիրենք քրիստոնեական եկեղեցվո պատմությունը, կհաստատենք, թե առաջին իսկ դարերեն, երբ քրիստոնեությունը սկսավ զարգանալ և թափանցել տարբեր ժողովուրդներու և քաղաքակրթություններու մեջ, այդ ժողովուրդները պայքարեցան և նույնիսկ ջանացին այլափոխել քրիստոնեական սկզբունքներն ու վարդապետությունները: Այդ պատճառով է, որ տիեզերական ժողովները անհրաժեշտություն մը դարձան պահպանելու համար բացարձակ նկարագիրը՝ Քրիստոսի մարդկության խորհուրդին և Ավետարանի պատգամին անաղարտության: Այս առթիվ կուգենք շեշտել նաև, որ առաջին տիեզերական ժողովները ամբողջությամբ հաջողեցան իրենց նպատակի իրագործման մեջ:

Հաջորդ դարերուն, սակայն, աշխարհագրական, քաղաքական, ընկերային, մշակութային և այլ պատճառներ, որոնք հակասակ էին քրիստոնեության առողջ և մաքուր հոլացքին, ստեղծեցին բաժանումներ, որոնք անհասկացողության և անհամընդունության պատճեններ բարձրացուցին իրարու միջև և, դժբախտաբար, իրաց այս կացությունը միմիայն տկարացուց քրիստոնեական ոգին և, փոխանակ հաստատելու եղբայրությունը ժողովուրդներու մեջ, ստեղծեց բաժանում և թշնամություն:

Հոգեկան և բարոյական տագնապի այս օրերուն, որմե կանցնի ներկա դարու մարդկությունը, և պայքարելու համար նյութապաշտության և մեքենականացման գաղափարին դեմ, որոնք մարդը կպարպեն հոգեկանութենե և ամեն տեսակ իդեալե, քրիստոնեական եկեղեցիներ անդրադարձան այս վտանգին և ներկայիս լրջորեն կմտահոգվին սրբագրելու համար իրենց անցյալի պիսկները և ջանք չեն խնայեր իրար մոտենալու՝ համագործակցությամբ մը վերահաստատելու համար եկեղեցիներու միությունը: Այս ոգիով է, որ, գոր օրինակ, քառորդ դարե մը ի վեր հիմնված է Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը և որ այս ոգիով է դարձյալ, որ հոռմեական կաթոլիկ եկեղեցին կազմակերպեց Վատիկանի Բ ժողովը՝ երջանիկ նախաձեռնությամբը՝ Նորին Սրբություն Հովհաննես ԻԳ.

Պապին, որ քրիստոնեական ոգիով և սատվածային սիրով ներշնչված անձնավորություն մըն էր: Վատիկանի Բ ժողովը արժանի է նկատվելու որպես անկյունաքար մը կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ, քրիստոնեական եկեղեցիներու միջև իր ստեղծած եղբայրական նոր հարաբերությանց համար:

Այսօր ահա արդեն 7 դարեր ետք կոգեկոչենք Լիոնի Բ ժողովը և երբ կնայինք մեր այսօրվան հարաբերություններուն վրա, փառք կուտանք Աստուծո՝ քրիստոնեական ոգիով կատարված այս մեծ հեղաշրջումին համար:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին այս կացության առջև միայն ուրախ կրնա ըլլալ և կաղոթե առ Աստված, որ եկեղեցիներու միջև արդյունավոր գործակցությունը հետզհետե զարգանա, և Աստուծո կամքին համաձայն իջեւ հասչուցան և խաղաղության ոգին, որ ուրիշ բան չէ, եթե ոչ քրիստոնեական եկեղեցվո միությունը»:

Հետևյալ օրը, հոկտեմբերի 19-ին, Լիոնի քաղաքագլուխ պրն. Լուի Պրադելը քաղաքապետարանի ընդարձակ դահլիճում ընդունել է հանդիսություններին մասնակցած բարձրաստիճան հոգևորականներին և այլ պաշտոնական հյուրերի: Իր արտասանած ճառում քաղաքագլուխը, ողջունելով հարգարժան հյուրերի ներկայությունը Լիոն քաղաքում, իր ուրախությունն է հայտնել սույն հանդիպման համար՝ նշելով միաժամանակ, որ ինքը քաղաքապետարանի նույն պատմական դահլիճում ընդունել է պետական և եկեղեցական բազմաթիվ բարձրաստիճան անձնավորությունների, այդ թվում նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին, որից միշտ պահում է լավագույն հիշողություններ:

Կարդինալ Վիլբրանդսի այցելությունը Ամերիկայի հայոց առաջնորդարան

Միջեկեղեցական հարցերի առնչությամբ Վատիկանի Բ ժողովի «Հրամանագրի հայտարարման» տասներորդ տարեդարձի առթիվ, Վաշինգտոնի ս. Մարթենու կաթողիկե Մայր տաճարում սույն թվականի նոյեմբերի 17-ին տեղի է ունեցել Էկումենիկ արարողություն: Սույն արարողությունը և ինչպես նաև նոյեմբերի 18-ին կայացած ժողովին, ի դեմս Հայաստանյայց եկեղեցու, ներկա է եղել Հյուսիսային Ամերիկայի հայոց արեւելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Կրոնական արարողության հյուր-քարոզիչն է եղել Քրիստոնյաների միության

քարտուղարության նախագահ կարդինալ ժան Վիլբրանդը, որը ժողովի ավարտից հետո մի քանի օրով այցելել է Նյու-Յորք: Նոյեմբերի 22-ին Ամերիկայի հայոց առաջնորդարանի դահլիճում, ի պատիվ կարդինալ Վիլբրանդի, տեղի է ունեցել ճաշկերույթ-ընդունելություն, որին հրավիրված

են կարդինալ Վիլբրանդին՝ հայ եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ նրա ցուցաբերած հետաքրքրության և անկեղծ բարեկամության համար, այդ ստիժի հիշատակելով կարդինալի տված այցելությունները Մայր Աթոռ ս. Էջմիածնին և Հայաստանյայց եկեղեցու նվիրապետական մյուս



Կարդինալ Վիլբրանդը Նյու-Յորքի հայոց առաջնորդարանում

են եղել Ամերիկայի եպիսկոպոսական, լուծարական, հոռոմեական կաթոլիկ, հույն օրթոդոքս, ռուս պրավոսլավ, արևելյան ուղղափառ եկեղեցիների բարձրատիճան հոգեվորականները, ինչպես նաև հայ կաթողիկե և ավետարանական համայնքների ներկայացուցիչները: Ծաշկերույթին ներկա են եղել նաև տ. Տիրան արքեպիսկոպոսը, տ. Բաբկեն, տ. Զավեն եպիսկոպոսները և Ամերիկայի հայոց թեմի մի շարք քահանա հայրեր:

Ծաշկերույթի ավարտին տ. Թորգոմ արքեպիսկոպոսը հանդես է եկել կարդինալ Վիլբրանդին ուղղված ողջույնի հավիրճ մի ուղերձով, ուր, հանուն Հայաստանյայց եկեղեցու և Հայոց Հայրապետի, իր երախտագիտությունն ու գնահատանքն է հայտ-

Աթոռներին: Իր խոսքի մեջ տ. Թորգոմ արքեպիսկոպոսը շեշտել է քրիստոնեական եկեղեցիների միջև հաստատված բարեկամական կապերի և էկումենիկ գործակցության ամրապնդման անհրաժեշտությունը՝ ի խնդիր ժողովուրդների եղբայրության, աշխարհի խաղաղության և Ավետարանի պատգամների տարածման աշխարհակացած աշխարհում:

Իր պատասխան խոսքի մեջ կարդինալ Վիլբրանդը հիշել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի Վատիկան այցելությունը 1970 թվականի մայիսին, որպես կարեվոր մի իրադարձություն հոռոմեական կաթոլիկ և հայ առաքելական եկեղեցիների պատմության մեջ, և միաժամանակ շեշտել կարևորությունը բոլոր քրիստոնեական եկե-

ղեցիների լայն համագործակցության՝ կարողանալ ամոքելու համար աշխարհի ժողովուրդների բազմատեսակ ցավերը: Անդրադառնալով Հայաստանյայց եկեղեցուն, կարդինալը նշել է, որ հայ եկեղեցին թեև փոքր եկեղեցի է քրիստոնեական եկեղեցիների ընտանիքում, սակայն նա մեծ է իր պատմությամբ, ավանդությամբ, իր ստեղծած մշակույթով և մանավանդ քրիստոնեական հավատի պաշտպանության համար իր տված բազմաթիվ մարտիրոսներով:

Ընդունելությունն ավարտվելուց հետո կարդինալն առաջնորդվել է ս. Վարդան Մայր եկեղեցի, ուր կատարել է իր աղոթքը:

Սոֆիայի Ալեքսանդր Նևսկի հուշարձան-տաճարի հիսնամյակի հանդիսությունը

Սույն թվականի նոյեմբերի 23-ին Սոֆիայում տեղի է ունեցել Ալեքսանդր Նևսկի հուշարձան-տաճարի հիսնամյակի հանդիսավոր տոնակատարությունը, որին ներկա է եղել Մոսկվայի և համայն Ռուսիո Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքը՝ ընկերակցությամբ Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմի և ռուս եկեղեցու այլ հոգևորականների:

Հոգևոր արարողություններին նախագահել է բուլղարական օրթոդոքս եկեղեցու Նորին Սրբություն Մաքսիմ Պատրիարքը՝ իր շուրջ ունենալով բուլղարական եկեղեցու միտրոպոլիտներին:

Հանդիսություններին և այդ առթիվ կազմակերպված պաշտոնական ճաշկերույթին ներկա են եղել պետական ներկայացուցիչներ:

Սույն հանդիսություններին և ճաշկերույթին հրավիրված է եղել նաև Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի ատենապետ արև. Օննիկ Ասլանյանը, որը հայ եկեղեցու անունից արտագին բարեմաղթություններ է արել Ս. Մաքսիմ և Ս. Պիմեն Սրբազան Պատրիարքներին:

Նոյեմբերի 25-ին բուլղարական օրթոդոքս եկեղեցու հոգևոր ակադեմիայի դահլիճում տեղի է ունեցել մասնավոր հանդիսություն, ուր համայն Ռուսիո Պատրիարք Ն. Ս. Պիմենին տրվել է հոգևոր ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում:

Նոյեմբերի 27-ին Ս. Պիմեն Պատրիարքը իր շքախմբով մեկնել է Մոսկվա:

Հոռմեական կաթոլիկ և դպտական ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներից կազմված աստվածաբանական միացյալ հանձնաժողովի միտը

Հոռմեական կաթոլիկ և դպտական ուղղափառ եկեղեցիների ներկայացուցիչներից կազմված աստվածաբանական միացյալ հանձնաժողովը, որը հաստատվել էր Պողոս Զ Պապի և Ծենուդա Գ Պատրիարքի կողմից Հոռմում 1973 թվականի մայիսին նրանց հանդիպման ընթացքում, իր առաջին ընտաշրջանը գումարել է սույն թվականի մարտի 26—30-ը Կահիրեում:

Տասնչորս հոգուց բաղկացած սույն հանձնաժողովի կազմում ընդգրկված են հոգևորական և աշխարհական ծանոթ աստվածաբաններ և գիտնական դասախոսներ երկու եկեղեցիներից: Նստաշրջանում միացյալ ուսումնասիրության նյութ են դարձել աստվածաբանության, քրիստոսաբանության, հայրաբանության, ծիսապաշտության, եկեղեցու ավանդության, պատմության բնագավառներին վերաբերող հարցեր, ինչպես նաև շոշափվել են գործնական բնույթի մի շարք խնդիրներ: Խորհրդակցության ավարտին խմբագրվել է միացյալ մի տեղեկագիր և որոշվել հանձնաժողովի երկրորդ նստաշրջանն անցկացնել 1974 թվականի հոկտեմբերին, դարձյալ Կահիրեում:

Հայ հոգևորականի դասախոսությունները ռումին օրթոդոքս եկեղեցու հոգևոր ճեմարաններում

Կլուժի և Կարանսեբեշի (Ռումինիա) հոգևոր ճեմարանների տեսչությանց հրավերով սույն թվականի նոյեմբերի 12—22-ը Բուխարեստի հայոց հոգևոր հովիվ տ. Զարեհ Ժ. Վրդ. Պարոնյանը ռումիններեն լեզվով երկու դասախոսություններ է տվել վերոհիշյալ քաղաքների հոգևոր ճեմարաններում հետևյալ թեմաների շուրջ.

ա. «Տրանսիլվանիայի հայերը և նրանց աղոթատեղիները».

բ. «Հայ եկեղեցու Պատարագամատուցը և նրա աղբյուրները»:

Կլուժում դասախոսություններին ներկա են եղել տ. Ժուստինիան Եպիսկոպոսը և ավելի քան 250 ճեմարանական ուսանողներ, դասախոսներ և հոգևորականներ:

Կարանսեբեշի ճեմարանում տրված դասախոսություններին նախագահել է Բանատի միտրոպոլիտ տ. Նիկոլաե Կորնեանուն, և ներկա են եղել շուրջ 300 ուսանողներ, դասախոսներ և տեղացի հոգևորականներ: